

**ԸՆԹԱՑԱԿԱՐԳ
ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԻ
ԸՆՏՐՈՒԹՅԱՆ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույն ընթացակարգը սահմանում է Արցախի պետական համալսարանի ռեկտորի /այսուհետ՝ ռեկտորի/ թափուր պաշտոնի հավակնորդների առաջադրման, ընտրությունների անցկացման, ռեկտորի նշանակման և նրա հետ աշխատանքային պայմանագրի կնքման կարգը:
- 1.2. Ռեկտորի ընտրությունների ընթացակարգը, համալսարանի կանոնադրությանը համապատասխան, հաստատում է համալսարանի խորհուրդը /այսուհետ՝ խորհուրդ/:
- 1.3. Ռեկտորի ընտրությունների կազմակերպման ծախսերը կատարվում են համալսարանի միջոցների հաշվին:

2. ՌԵԿՏՈՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

- 2.1. Համալսարանում ռեկտորի թափուր պաշտոն առաջանալու դեպքում լիազորված պետական մարմինը հայտարարում է բաց մրցույթ:
- 2.2. Մրցույթի անցկացումից ոչ ուշ, քան 30 օր առաջ «Ազատ Արցախ» և «Լուսարար» թերթերում, ինչպես նաև Արցախի հանրային հեռուստատեսությամբ մրցույթի մասին հրապարակվում է հայտարարություն, որում զետեղվում է սույն ընթացակարգի «2.3» կետով սահմանված տեղեկատվությունը: Հայտարարությունը պետք է կրկնվի առաջին հրապարակումից հետո՝ 5-օրյա ժամկետում: Հրապարակումները կազմակերպում է խորհրդի նախագահը:
- 2.3. Հայտարարության տեքստում պարտադիր է նշել՝
 - ա) մրցույթի մասնակցելու համար դիմումների ընդունման վայրը և ժամկետը,
 - բ) մրցույթի անցկացման վայրը, օրը և ժամը,
 - գ) մրցույթին մասնակցելու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ սույն ընթացակարգի «2.4» կետի համապատասխան,
 - դ) հավակնորդին ներկայացվող պահանջները՝ սույն ընթացակարգի «3.2» կետի համապատասխան:
- 2.4. Մրցույթին մասնակցելու համար պահանջվում են հետևյալ փաստաթղթերը՝
 - ա) ինքնաառաջադրման դեպքում՝ դիմում, իսկ համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից առաջադրվելու դեպքում՝ կառուցվածքային ստորաբաժանման առաջադրման մասին որոշումը և առաջադրվելու՝ հավակնորդի գրավոր համաձայնությունը,
 - բ) լուսանկար,
 - գ) քաղվածք աշխատանքային գրքույկից,
 - դ) ինքնակենսագրություն,

- ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճեն, գիտական աստիճանը և /կամ/ գիտական կոչումը հավաստող վկայականների պատճեններ,
- զ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
- է) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից,
- ը) հրատարակված գիտական աշխատանքների ցուցակ,
- թ) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե այն գործում է),
- ժ) հավակնորդի գործունեության ծրագիր՝ փակ և կնքված փաթեթով, որը բացվում է հայտերի ընդունման վերջնաժամկետից հետո:

Սույն կետի «դ)», «ը)» և «ժ)» ենթակետերով նախատեսված տեղեկատվությունը ներկայացվում է նաև էլեկտրոնային տեսքով՝ «Microsoft Office, Word» ծրագրին համապատասխանող ձևաչափով:

2.5. Ռեկտորի թափուր պաշտոնի բաց մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերի հանձնումն ավարտվում է մրցույթի անցկացումից 10 օր առաջ:

2.6. Ռեկտորի թափուր պաշտոնի բաց մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը (համարակալած և յուրաքանչյուր էջի հետևամասում ստորագրած) հանձնվում է խորհրդի քարտուղարին՝ առձեռն կամ փոստով:

2.7. Հավակնորդների՝ օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերը ընդունելու նպատակով համալսարանում բացվում է գործերի ընդունման գրանցամատյան՝ էջերի համարակալումով, կարված և կնքված:

2.8. Գրանցամատյանի լրացված էջը կնքվում և փակվում է յուրաքանչյուր օրվա ավարտին:

2.9. Փոստային առաքման միջոցով ուղարկված փաստաթղթերը համարվում են ժամկետում տրված, եթե ստացվել են մինչև փաստաթղթերի ընդունման համար սահմանված ժամկետը լրանալը: Փաստաթղթերի փոստային առաքման դեպքում փաստաթղթերն ընդունող մարմինը դրանց ստացման մասին գրավոր ծանուցում է հավակնորդին:

2.10. Փաստաթղթերի առձեռն հանձնման դեպքում խորհրդի քարտուղարը կատարում է հանձնումը հավաստող նշագրում փաստաթղթերի՝ հավակնորդի օրինակի վրա:

2.11. Հայտերը ընդունելիս խորհրդի քարտուղարը պարտավոր է ստուգել հայտի համապատասխանությունը սույն ընթացակարգի «2.4» կետով ներկայացվող պահանջներին:

Փաստաթղթերի թերի լինելու դեպքում հավակնորդը տեղեկացվում է այդ մասին նույն պահին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ 1 օրվա ընթացքում, պատվիրված նամակով՝ հանձնման մասին հետադարձ ծանուցմամբ, հնարավորության դեպքում՝ նաև հեռախոսազանգով: Թերությունները կարող են վերացվել հայտերի ընդունման համար սահմանված ժամկետի ընթացքում:

Հայտերի ընդունումն ավարտվելու հաջորդ օրը խորհրդի քարտուղարը կից գրությամբ ընդունված փաստաթղթերի փաթեթը հանձնում է խորհրդի նախագահին:

Խորհրդի նախագահը մրցույթի անցկացումից առնվազն 1 շաբաթ առաջ՝

- ա) խորհրդի անդամներին է ուղարկում յուրաքանչյուր հավակնորդի ներկայացրած փաստաթղթերի պատճենները,
- բ) կազմակերպում է հավակնորդների անվան և ազգանվան, գիտական աստիճանի և կոչման, զբաղեցրած պաշտոնի, ինչպես նաև առաջադրման եղանակի վերաբերյալ

տեղեկատվության տարածում համալսարանում («Արցախի համալսարան» թերթում, համալսարանի ինտերնետային կայքում, ֆակուլտետների հայտարարությունների տախտակներին և այլն),

զ) կազմակերպում է փաստաթղթերի պատճենների առկայությունը համալսարանի գրադարանում:

3.ՌԵԿՏՈՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

3.1.Ռեկտորի թափուր պաշտոնի թեկնածուները առաջադրվում են համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կամ ինքնաառաջադրմամբ:

3.2.Ռեկտորի թափուր պաշտոնի հավակնորդներին ներկայացվող պահանջները սահմանվում են համալսարանի կանոնադրությամբ:

4.ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ

4.1. Ռեկտորի ընտրության խորհրդի նիստը նախապատրաստում և ղեկավարում է խորհրդի նախագահը:

Ռեկտորի ընտրության նիստը դռնփակ է (բացառություն է արվում ռեկտորի պաշտոնի՝ խորհրդի անդամ չհանդիսացող հավակնորդների համար):

4.2. Նիստի օրակարգը հետևյալն է՝

ա) հավակնորդների՝ սույն ընթացակարգով նախատեսված պահանջներին համապատասխանության հարցի որոշում,

բ) թեկնածուների ծրագրերի ներկայացում,

գ) հավակնորդներին հարցերի ներկայացում և խորհրդի անդամների ելույթներ,

դ) հաշվիչ հանձնաժողովի ձևավորում,

ե) ռեկտոր ընտրելու նպատակով գաղտնի քվեարկություն,

զ) ռեկտորի ընտրության արդյունքների մասին որոշման կայացում:

4.3. Խորհրդի մրցութային նիստը համարվում է իրավագոր, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների առնվազն երկու երրորդը:

4.4. Բացառությամբ սույն ընթացակարգի <<4.6>> և <<5.18>> կետերով նախատեսված որոշումների՝ նիստում խորհրդի մյուս որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

4.5. Խորհրդի նիստին ռեկտորի պաշտոնի հավակնորդի ներկայությունը պարտադիր է, սակայն նրա բացակայությունը հիմք չէ նրա թեկնածությունը քննարկումից կամ քվեարկությունից հանելու համար՝ բացառությամբ գրավոր ինքնաբացարկ հայտնելու դեպքերի:

4.6. Օրակարգի առաջին հարցով խորհրդի քարտուղարը զեկուցում է ռեկտորի թեկնածուների՝ սույն ընթացակարգի պահանջներին բավարարելու հարցը: Հարցի ներկայացումից հետո զեկուցողը պատասխանում է առաջացած հարցերին: Խորհրդի ցանկացած անդամ կարող է առաջարկ ներկայացնել անձի թեկնածուների ցուցակից հանելու վերաբերյալ՝ հիմնավորելով, թե սույն ընթացակարգի որ պահանջներն են խախտված: Հավակնորդին ցուցակից հանելու առաջարկը խորհրդի նախագահի կողմից դրվում է քվեարկության: Հավակնորդը հանվում է ցուցակից, եթե առաջարկին կողմ է քվեարկել նիստին ներկա անդամների առնվազն երկու երրորդը:

4.7. Օրակարգի երկրորդ հարցով խորհրդի նախագահը ծրագրային ելույթների համար, ըստ ազգանունների այբբենական կարգի, ձայնը տալիս է հավակնորդներին:

Յուրաքանչյուր հավակնորդ ունի ոչ ավելի քան 10 րոպե տևողությամբ ելույթի իրավունք: Յուրաքանչյուր հավակնորդի ելույթից հետո խորհրդի նախագահը հայտարարում է հարցերի 1-ին հերթագրում, որից հետո խորհրդի հերթագրված անդամները, ըստ հերթագրման հերթականության, ստանում են թեկնածուին հարց տալու հնարավորություն: Հարցի և պատասխանի տևողությունը պետք է հակիրճ լինի: Թեկնածուին տրվող հարցերը կարող են վերաբերել միայն նրա կողմից ներկայացված փաստաթղթերին կամ ծրագրային ելույթին: Հարցերը և պատասխանները արձանագրվում են խորհրդի քարտուղարի կողմից:

4.8. Առաջին հերթագրման արդյունքում տրված հարցերին թեկնածուի պատասխանելուց հետո խորհրդի նախագահը, ըստ անհրաժեշտության, հայտարարում է հարցերի 2-րդ հերթագրում՝ սույն ընթացակարգի «4.7» կետով նախատեսված կարգով:

4.9. Բոլոր թեկնածուներին ուղղված հարցերի և նրանց պատասխանների ավարտից հետո սկսվում է քննարկում: Խորհրդի անդամների ելույթները կարող են դադարեցվել որոշմամբ: Ելույթ ունեցողներին հարցեր չեն տրվում:

4.10. Խորհրդի նիստերը ընդմիջվում են խորհրդի որոշմամբ:

4.11. Եթե գաղտնի քվեարկությունը չի սկսվել մինչև ժամը 19:00-ն, նիստն ընդմիջվում է մինչև հաջորդ օրը՝ ժամը 9:00-ն՝ անկախ նրանից, հաջորդ օրն աշխատանքային է, թե ոչ: Եթե գաղտնի քվեարկությունը սկսվել է, ապա նիստը շարունակվում է մինչև քվեարկության ավարտը և ընտրության արդյունքների մասին որոշման կայացումը:

5. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՅՈՒՄԸ

5.1. Նիստում քննարկումներից հետո խորհրդի նախագահը, ըստ ազգանունների այբբենական կարգի, հրապարակում է հավակնորդների ազգանուն անունները: Եթե վերջիններս իրենց անունը հրապարակելու պահին ինքնաբացարկ չեն հայտնում, ապա նրանց թեկնածությունը ներառվում է քվեաթերթիկում:

5.2. Խորհրդի նախագահը ներկայացնում է գաղտնի քվեարկության կարգը:

5.3. Խորհուրդն իր կազմից ընտրում է 5 անդամներից կազմված հաշվիչ հանձնաժողով:

5.4. Հանձնաժողովը՝

ա) կազմակերպում և անցկացնում է քվեարկությունը,

բ) կազմում է ռեկտորի ընտրության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը (երկու օրինակից),

գ) հրապարակում է ռեկտորի ընտրության քվեարկության արդյունքները:

5.5. Հանձնաժողովի անդամների թեկնածություններն առաջադրում են խորհրդի անդամները:

Հավակնորդ հանդիսացող խորհրդի անդամները չեն կարող առաջադրվել և առաջադրել հաշվիչ հանձնաժողովի անդամության թեկնածուներ: Յուրաքանչյուր անդամի առաջադրումից հետո կազմակերպվում է քվեարկություն:

Առաջադրումներն ու քվեարկությունները շարունակվում են մինչև հանձնաժողովի կազմի համալրումը:

5.6. Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ և քարտուղար: Հաշվիչ հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

5.7. Ռեկտորի ընտրությունների քվեաթերթիկները ստորագրվում են հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

5.8. Ռեկտորի ընտրությունների քվեաթերթիկում նշվում են թեկնածուների ազգանուն—անունները՝ այբբենական կարգով: Յուրաքանչյուր թեկնածուի ազգանվան- անվան դիմաց առկա է « կողմ եմ» գրառումով վանդակը: Քվեաթերթիկը պետք է պարունակի նաև «բոլորին դեմ եմ » գրառումով վանդակ (հավելված 1.2.): Մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում նրա ազգանվան և անվան դիմաց առկա են «կողմ եմ» և «դեմ եմ» գրառումներով վանդակներ (հավելված 1.1.)

5.9. Խորհրդի անդամը հաշվիչ հանձնաժողովից քվեաթերթիկ ստանալիս ցուցակում ստորագրում է իր անվան-ազգանվան դիմաց:

5.10. Խորհրդի անդամը քվեարկության ժամանակ ունի միայն մեկ ձայնի իրավունք: Քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անդամի չի թույլատրվում:

5.11. Ընտրողը քվեաթերթիկում համապատասխան նշում է կատարում իր նախընտրած թեկնածուի ազգանվան-անվան դիմաց՝ «կողմ» գրառումով վանդակում՝ հետևյալ կերպ «V »: Եթե նա դեմ է բոլոր թեկնածուներին, ապա նշում է կատարում «բոլորին դեմ եմ» գրառումով վանդակում: Մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում ընտրողը նշում է կատարում «կողմ եմ» կամ «դեմ եմ» գրառումներով վանդակներից միայն մեկում:

5.12. Քվեարկությունն ավարտվելուց հետո հանձնաժողովի նախագահը բացում է քվեատուփը, քվեատուփից հանում է մեկական քվեաթերթիկ, հայտարարում է քվեարկության արդյունքը և փոխանցում է հանձնաժողովի անդամներին տեսակավորելու համար: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ մինչև քվեատուփից հաջորդ քվեաթերթիկը հանելը կարող է պահանջել քվեարկության դնելու քվեաթերթիկի անվավեր լինելու հարցը:

5.13. Քվեաթերթիկը համարվում է անվավեր, եթե չի համապատասխանում սույն ընթացակարգի «5.11» կետի պահանջներին կամ պարունակում է ընտրողի ինքնությունը բացահայտող նշում: Քվեաթերթիկի անվավերության վերաբերյալ հաշվիչ հանձնաժողովի որոշումը ընդունվում է հաշվիչ հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ:

5.14. Հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում արձանագրություն (հավելված 2.1 կամ 2.2),

Արձանագրության մեջ գրառվում է՝

- ա) քվեաթերթիկ ստացածների թիվը (ըստ ցուցակի ստորագրությունների),
- բ) քվեատուփում առկա քվեաթերթիկների ընդհանուր թիվը (ըստ ցուցակի ստորագրությունների),
- գ) անվավեր քվեաթերթիկների թիվը,
- դ) թեկնածուի (ների) ազգանունը (ները) և յուրաքանչյուրի ստացած ձայները:
- ե) «բոլորին դեմ» (մեկից ավելի թեկնածուների դեպքում) տրված ձայները:

5.15. Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները: Մեկից ավելի թեկնածուների դեպքում արձանագրության մեջ թեկնածուների ցուցակը տրվում է ըստ հավաքած «կողմ» ձայների քանակի նվազման հաջորդականությամբ:

5.16. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը հրապարակում է քվեարկության արդյունքները խորհրդի նիստում: Քվեարկության ընթացքի կամ քվեաթերթիկների հաշվման ընթացքի վերաբերյալ հանձնաժողովի՝ առարկություն ունեցող անդամը քվեարկության արդյունքները ներկայացնելուց հետո կարող է խորհրդին ներկայացնել նախօրոք գրավոր շարադրած հատուկ կարծիք: Խորհուրդը բաց քվեարկությամբ իր վերաբերմունքն է արտահայտում ներկայացված բոլոր հատուկ կարծիքների վերաբերյալ:

5.17. Քվեարկության արդյունքների հիման վրա խորհուրդն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա) ռեկտոր ընտրվելու մասին,

բ) քվեարկության երկրորդ փուլ անցկացնելու մասին,

գ) ընտրությունն անվավեր ճանաչելու և ռեկտոր չընտրվելու մասին,

դ) ընտրությունը չկայացած ճանաչելու և ռեկտոր չընտրվելու մասին:

5.18. Ռեկտորի պաշտոնում ընտրված է համարվում այն թեկնածուն, ով հավաքել է խորհրդի ցուցակային կազմի 50 տոկոսից ավելի ձայներ:

5.19. Առաջին փուլի քվեարկության արդյունքում ընտրությունները համարվում են չկայացած, իսկ ռեկտորը՝ չընտրված, եթե քվեարկված միակ թեկնածուն չի ստացել ընտրվելու համար անհրաժեշտ ձայներ, կամ եթե քվեարկվել են երկու և ավելի թեկնածուներ, և նրանք միասին չեն հավաքել խորհրդի ցուցակային կազմի 50 տոկոսից ավելի ձայներ:

5.20. Քվեարկության երկրորդ փուլ անցկացվում է, եթե քվեարկվել են երկու կամ ավելի թեկնածուներ, և նրանցից ոչ մեկը չի ստացել անհրաժեշտ թվով ձայներ: Այս դեպքում երկրորդ փուլ են անցնում առավել ձայներ հավաքած երկու թեկնածուները, եթե նրանք միասին հավաքել են խորհրդի ցուցակային կազմի 50 տոկոսից ավելի ձայներ, իսկ երկրորդ թեկնածուի ձայներին հավասար թվով ձայներ հավաքած այլ թեկնածուների առկայության դեպքում՝ նաև այդ թեկնածուները: Եթե առավել ձայներ հավաքած երկու թեկնածուները միասին չեն հավաքել խորհրդի ցուցակային կազմի 50 տոկոսից ավելի ձայներ, ապա երկրորդ փուլ են անցնում առավել ձայներ հավաքած երեք, իսկ երրորդ թեկնածուի ձայներին հավասար թվով ձայներ հավաքած այլ թեկնածուների առկայության դեպքում՝ նաև այդ թեկնածուները:

5.21. Երկրորդ փուլի քվեարկության արդյունքների հիման վրա խորհուրդը ընդունում է որոշներից մեկը՝

ա) ռեկտոր ընտրվելու մասին,

բ) քվեարկության երրորդ փուլ անցկացնելու մասին,

գ) ընտրությունը չկայացած ճանաչելու և ռեկտոր չընտրվելու մասին:

5.22. Երկրորդ փուլի քվեարկության արդյունքում ընտրությունները ճանաչվում են չկայացած, իսկ ռեկտորը՝ համարվում չընտրված, եթե քվեարկված թեկնածուները միասին չեն հավաքել խորհրդի ցուցակային կազմի 50 տոկոսից ավելի ձայներ:

5.23. Քվեարկության երրորդ փուլ անցկացվում է, եթե քվեարկության երկրորդ փուլի արդյունքում թեկնածուներից ոչ մեկը չի ստացել անհրաժեշտ թվով ձայներ: Երրորդ

փուլ են անցնում առավել ձայներ հավաքած երկու թեկնածուները, իսկ երկրորդ թեկնածուի ձայներին հավասար թվով ձայներ հավաքած այլ թեկնածուների առկայության դեպքում՝ նաև այդ թեկնածուները:

5.24. Երրորդ փուլի քվեարկության արդյունքների հիման վրա խորհուրդն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա) ռեկտոր ընտրվելու մասին,

բ) ընտրությունները չկայացած ճանաչվելու և ռեկտոր չընտրվելու մասին:

5.25. Երրորդ փուլի քվեարկության արդյունքում ընտրությունները ճանաչվում են չկայացած, իսկ ռեկտորը՝ համարվում չընտրված, եթե որևէ թեկնածու չի ստացել ընտրվելու համար անհրաժեշտ թվով ձայներ:

5.26. Ռեկտորի ընտրության արդյունքը ձևակերպվում է խորհրդի որոշման տեսքով: Որոշումը ստորագրվում է խորհրդի նախագահը: Որոշման մեկ օրինակը խորհրդի նախագահը ներկայացնում է լիազորված պետական մարմին:

5.27. Ռեկտորի ընտրական գործընթացն արտացոլող բոլոր փաստաթղթերը խորհրդի նիստի արձանագրության հետ միասին պահվում են համալսարանում:

5.28. Ընտրությունների ընթացակարգի խախտումները և ընտրությունների արդյունքները կարող են բողոքարկվել ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.29. Ընտրությունները խորհրդի կողմից ճանաչվում են անվավեր, եթե ընթանում են ԼՂՀ օրենսդրության, համալսարանի կանոնադրության, սույն ընթացակարգի էական խախտումներով:

Եթե խախտումները տեղի են ունեցել մինչև խորհրդի մրցութային նիստը, ապա ընտրություններն անվավեր ճանաչվելու դեպքում լիազորված պետական մարմինը հայտարարում է նոր մրցույթ:

Եթե խախտումները տեղի են ունեցել խորհրդի մրցութային նիստում կամ քվեարկության փուլում, ապա ընտրություններն անվավեր ճանաչվելու դեպքում խորհուրդը հայտարարում է նոր քվեարկություն:

5.30. Ռեկտոր ընտրվելու մասին խորհրդի որոշման մեկ օրինակը խորհրդի նախագահը կից գրությամբ ներկայացնում է լիազորված պետական մարմին:

**ՔՎԵԱԹԵՐԹԻԿ
ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ**

Խորհրդի «___» _____ թ. նիստում (արձանագրություն թիվ _____)
ամսաթիվ, տարեթիվ

ռեկտորի ընտրության փակ (գաղտնի) քվեարկության

կողմ

դեմ

_____ թեկնածուի ազգանուն, անուն

*) Նշումը կատարվում է «կողմը եմ» կամ «դեմ եմ» գրառումներով վանդակներից միայն մեկում:

Թեկնածույանը կողմ լինելու դեպքում նշում է «կողմ», իսկ դեմ լինելու դեպքում՝ «դեմ» գրառումով վանդակում:

**ՔՎԵԱԹԵՐԹԻԿ
ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ**

Խորհրդի « ____ » _____ թ.նիստում (արձանագրություն թիվ ____)
ամսաթիվ, տարեթիվ
ռեկտորի ընտրության փակ (գաղտնի) քվեարկության

*)1.Որևէ մեկի թեկնածությանը կողմ լինելու դեպքում քվեաթերթիկում համապատասխան նշում է կատարվում նախընտրած թեկնածուի ազգանվան-անվան դիմաց՝ «կողմ» գրառմամբ վանդակում:
2.Բոլոր թեկնածուներին դեմ լինելու դեպքում նշում է կատարվում «բոլորին դեմ եմ» գրառմամբ վանդակում:

<i>Թիվ</i>	<i>Թեկնածուի ազգանուն, անուն</i>	<i>Կողմ</i>
1.		
2.		
3.		
4.		
5.	Բոլորին դեմ եմ	

ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
հաշվիչ հանձնաժողովի նիստի

Հաշվիչ հանձնաժողովը ընտրվում է Արցախի պետական համալսարանի Խորհրդի «___» _____թ. նիստում (արձանագրություն թիվ _____) հետևյալ կազմով՝
ամսաթիվ, տարեթիվ

1. _____ (նախագահ)
2. _____ (քարտուղար)
3. _____
4. _____
5. _____

Համալսարանի խորհրդի 28 անդամներից էին _____-ը:

Քվեարկել են համալսարանի ռեկտորի թեկնածությունները:

Քվեարկությանը մասնակցել են համալսարանի խորհրդի _____ անդամներ:

Բաժանվել է _____ քվեաթերթիկ:

Քվեատուփում առկա էր _____ քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներն են՝

Փակ (զաղտնի) քվեարկության արդյունքներով _____-ը
ազգանուն , անուն

Ընտրված է Արցախի պետական համալսարանի ռեկտոր:

Կամ՝

Փակ (զաղտնի) էվեարկության արդյունքներով Արցախի պետական համալսարանի ռեկտորի ընտրությունը համարվում է չկայացած:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ _____
ստորագրություն, ազգանուն, անուն

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝

1. _____,
ստորագրություն, ազգանուն, անուն
2. . _____,
ստորագրություն, ազգանուն, անուն
3. . _____,
ստորագրություն, ազգանուն, անուն
4. . _____,
ստորագրություն, ազգանուն, անուն

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
հաշվիչ հանձնաժողովի նիստի

Հաշվիչ հանձնաժողովը ընտրվել է Արցախի պետական համալսարանի խորհրդի « ____ »
_____թ. նիստում (արձանագրություն թիվ 5) հետևյալ կազմով՝

1. _____ (նախագահ)
2. _____ (քարտուղար)
3. _____
4. _____
5. _____

Համալսարանի խորհրդի 28 անդամներից էին _____-ը:

Քվեարկել են համալսարանի ռեկտորի թեկնածությունները:

Քվեարկությանը մասնակցել են համալսարանի խորհրդի _____ անդամներ:

Բաժանվել է _____ քվեաթերթիկ:

Քվեատուփում առկա էր _____ քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներն են՝

Քվեակցության արդյունքներն են՝

<i>Թիվ</i>	<i>Թեկնածուի ազգանուն, անուն</i>	<i>Կողմ</i>
1.		
2.		
3.		
4.	Բոլորին դեմ եմ	
5.	Անվավեր	

Փակ (զաղտնի)քվեարկության արդյունքներով _____-ը

ազգանուն,անուն

ընտրված է Արցախի պետական համալսարանի ռեկտոր:

Կամ՝

Փակ (զաղտնի) քվեարկության արդյունքներով Արցախի պետական համալսարանի ռեկտորի թեկնածուներից ոչ մեկը չի ընտրվում ռեկտոր, իսկ ներքոհիշյալ թեկնածուները՝

1. _____,

ազգանուն,անուն

2. _____,

ազգանուն,անուն

3. _____,

ազգանուն,անուն

մասնակցում են կրկնակի քվեարկությանը:

Կամ՝

փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներով Արցախի պետական համալսարանի ռեկտորի ընտրությունը համարվում է չկայացած :

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝

_____	_____
ստորագրություն	ազգանուն,անուն
Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝	
1.	_____

ստորագրություն	ազգանուն,անուն
2.	_____

ստորագրություն	ազգանուն,անուն
3.	_____

ստորագրություն	ազգանուն,անուն
4.	_____

ստորագրություն	ազգանուն,անուն

ՑՈՒՑԱԿ

«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային
կազմակերպության խորհրդի 2018թ. ----- -ի նիստում
(արձանագրություն թիվ ...) ռեկտորի ընտրության փակ գաղտնի քվեարկության
քվեաթերթիկ ստացած անդամների

	<i>Անուն, հայրանուն, ազգանուն</i>	<i>Ստորագրություն</i>
1.		
2.		
3.		
4.		
5.		
6.		
7.		
8.		
9.		
10.		
11.		
12.		
13.		
14.		
15.		
16.		
17.		
18.		
19.		
20.		
21.		
22.		
23.		
24.		
25.		
26.		
27.		
28.		

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
հաշվիչ հանձնաժողովի նիստի

Հաշվիչ հանձնաժողովը ընտրվել է Արցախի պետական համալսարանի Խորհրդի « »-----
2018թ. նիստում (արձանագրություն թիվ)՝ հետևյալ կազմով՝

1. _____ (նախագահ),
2. _____ (քարտուղար),
3. _____,
4. _____,
5. _____:

Խորհրդի անդամներից ներկա էին ----- -ը:

Քվեարկել է ռեկտորի թեկնածությունը:

Քվեարկությանը մասնակցել են խորհրդի ----- անդամներ:

Բաժանվել է ----- քվեաթերթիկ:

Քվեատուփում առկա էր ----- քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներով _____ը ընտրված է Արցախի
պետական համալսարանի ռեկտոր:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝

_____	_____
ստորագրություն	ազգանուն,անուն
Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝	
1. _____	_____
ստորագրություն	ազգանուն,անուն
2. _____	_____
ստորագրություն	ազգանուն,անուն
3. _____	_____
ստորագրություն	ազգանուն,անուն
4. _____	_____
ստորագրություն	ազգանուն,անուն